

թովայի հայօճախներուն (2017 եւ 2018) նովրուած գիտաժողովներուն, ներկայացնելով մանրամասնեալ եւ համապարփակ պատմոփինը այդ հայօճախներու եկեղեցական թեմերուն:

Բեղուն եւ նուիրեալ գրիչ, գիտական խորունկ մտքի եւ լայն տեսադաշտի տէր Դերիկեան կը յատկանչուէր ազնուութեամբ, համեստութեամբ եւ շինհի գործնականութեամբ: Դժբախտաբար, ան կեանքէն հեռացաւ իր գիտական բերքի հազիւ առաջին մեծ շրջանը բոլորած: Հրատարակած է Երրուսաղէմի հայ ուխտաւորը (1999), Պայծառակերպութինը եւ Վարդապառի դոնը (2006), Հայ գիրքը, մասն Ա. (2012), Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում (2012), Վասպուրականի արծիւր հայ գրականութեան անդասպառում (2021) աշխատութինները:

Դոկտոր Վարդան Դերիկեան մահացաւ 13 Ապրիլ 2023ին, Երեւան:

<<<



ՍՈՒՐԵՆ ՅԱՍՄԻԿԵԱՆ
(1935–2022)

Չարժանկարի պատմաբան, քննադատ, տեսաբան, բեմագրող, արուեստագիտութեան թեկնածու, <<արուեստի վաստակաւոր գործիշ (1987), ուսուցչապետ (1996) Սուրեն Գուրգէնի Յասմիկեանը (Յակոբեան) ծնուել է 1935 Մարտի 19ին, Երեւանում: Հայ թատրոնի եւ շարժանկարի ականաւոր դերասանուիի, առաջին ՀԽՍՀ ժողովրդական արտիստուուի Յասմիկի (Ժագուի Յակոբեան, 1879-47) թոռն է:

Սուրեն Յասմիկեանը մի առիթով գրել է, որ հայ շարժանկարն իր համար թերեւս սկսուել է 1943ի այն օրը, երբ յայսնուել է Երեւանի գլխաւոր իրապարակում եւ տեսել «Դաւիթ-Բէկ» շարժանկարի համար կառուցուած բեմազարդերը: Սակայն շարժանկարին նուիրուելը հաւանաբար նախա-սահմանուեց դեռ նրա ծննդեան տարում, երբ Ստեփան Կէորիկովի նկարահանող խումբը վաերագրել է սիրուած դերասանուիոն՝ վերջինիս բեմական գործոններեան երեսնամեակին նուիրուած վաերագրութեան մէջ, որտեղ Յասմիկը խաղացնում է մի քանի ամսական Սուրենին եւ ապա յանձնելով մօրը՝ գնում թատրոն...: Դեռ մանկուց որոշել է արուեստով զբաղութելու դէպքում, ի պատիւ մեծ մօր, ընտրելու է «Յասմիկեան» կեղծանունը, որը յետագայում դարձել է նրա «պաշտօնական» ազգանունը:

1957ին աւարտել է ԵՊՀ բանասիրական բաժանմունքի ուսա գրականութեան բաժինը: Նոյն թուականին Երեւանում լոյս է տեսել նրա կազմած *К показу спектаклей Даргинской драматической студии* (Դարգինեան

դրամատիկական ստուդիայի ներկայացումների ցուցադրութեան առթիւ գրքոյկը: 1960ականներին աշխատել է «Հայֆիլմ»ում՝ որպէս խմբագիր: Եղել է առաջիններից, որոնք գիտական ուսումնասիրութեան առարկայ են դարձրել հայ շարժանկարը: 1970ին Մուկուայում ստացել է արուեստագիտութեան թեկնածովի կոչում: 1971-82' եղել է Հայաստանի Պետկինոյի գիտատր խմբագիր, 1989ից՝ Հայաստանի Շարժանկարիչների միութեան կինոքննադատների խմբի նախագահ: 1968-78' հեռուստատեսութիւնում վարել է հայ կինոյին նուիրուած հաղորդաշարը: 1972ից դասաւանդել է Երեւանի Խաչատուր Աբրվեանի անուան պետական մանկավարժական համալսարանի մշակոյթի բաժնում, 1983ից՝ Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում, որտեղ 1994-2006' եղել է շարժանկարի տեսութեան եւ պատմութեան ամբիոնի վարիչը: 1991ին դրուագային դերով նկարահանուել է Վիգեն Չալդրանեանի «Զայն բարբառոյ...» շարժանկարում:

1957ից հեղինակել է շուրջ 1000 կինոքննադատական յօդուած, բազմաթիւ բեմագրեր: Ռուսերէն լրյու են տեսել նրա *Армянская кинематография* (Հայկական շարժանկարը, 1977) եւ *Кино Армении* (Հայաստանի շարժանկարը, 1981) գրքոյկները:

1992ին լրյու տեսաւ Յասմիկեանի առաջին ծավալուն *Teschnyi kader* (Սեղմ դրուագ) աշխատութիւնը: Չինելով հայ կինոյի պատմութիւն՝ այն ժամանակագործն ներկայացնում է հայ շարժանկարի գեղարուեստական արտայայտչականութեան հոլովոյեց՝ հիմնականում նրա ուղենչային եւ կարեւոր դերակատարութիւն ունեցած նմուշների արուեստաբանական վերլուծութեան միջոցով: Ըստ հեղինակի՝ 1960ականներին հայ շարժանկարը ձեռք է բերել իր հսկական ձայնը եւ հնարաւորութիւն տուել խօսել հայ կինոյի՝ որպէս գեղարուեստական երեւոյթի մասին: Յասմիկեանի խօսքը մեծ մասամբ մնում է արուեստաբանական վերլուծութեան, կինոստեղծագործութեան արժենուրման սահմաններում՝ գուգահեռներ կատարելով համաշխարհային շարժանկարի, թատրոնի, գրականութեան տարբեր երեւոյթների հետ: Գրքում չկան յլումներ, աղբիւրների վկայակոչուաններ. այն հեղինակի՝ բուն շարժանկարային գործընթացի բովով անցած եւ այդ ամէնդ ժամանակի հետ «մարսած» մասնագէտի երկարամեայ դիտարկուանների, վերլուծումների եւ բիւրեղացումների հանրագումարն է, փորձ՝ ի յայտ բերելու հայ կինոյի զարգացման տրամաբանութիւնը: Ըստ նրա, 1920ականների հայկական կինոպաստառին տիրապետողը ժողովրդի կենցաղն է՝ արտայայտուած ինչպէս մանրամասների, այնպէս էլ դիպաշարային կապերում եւ անգամ փոխարերութեան մէջ: Յաջորդ գլխում կինոգէտը տալիս է պաստառին փողոցի՝ որպէս գործող անձի, հաւաքական կերպարի ի յայտ գալը՝ չվարանելով յայտարարել, որ «Փողոցը, որ բացայալիք եւ երգել է իշխալական նէռուէալիզմը, ճանաչուել է հայկական ‘Պեպօ’ ֆիլմում» (էջ 18): 1950-60ականներին ոչ պատահականօրէն աշխարհի գրեթէ բոլոր լայնութիւններում տեղի է ունեցել, Յասմիկեանի բնորոշմամբ, ինքնաճանաչման

բուռն բռնկում, որն իր վառ հետքն է թողել արուեստի մէջ, նոյնը եւ՝ հայ շարժանկարի ասպարեզում: Առաջին ակնառու երեւյթը հայ կինոմշակոյթում համարում է Ֆրունզէ Դովլաթեանի «Բարեւ, ես եմ»ը՝ բնորոշելով այն որպէս զուտ հեղինակային շարժանկար: Յասմիկեանի համոզմամբ՝ այդ աշխատանքը չծնեց յետնորդներ, «սակայն առաջացրեց աննախադէպ վերելք հայ շարժանկարում, գրեթէ իրաքանչիւր կինոարուեստագէտի մէջ ցանկութիւն առաջացրեց անմիջապէս, անյապաղ արդայայրուելու եւ գիտակցարար, միտումնաւոր գնալու մէկ այլ ճանապարհով, քան ‘Բարեւ, ես եմ’ի հեղինակները: Այդպէտե է, թերեւս, հայ կինոյում ֆիլմի գիսաւոր, վճռորոշ նշանակութիւնը՝ դառնալ մի դրսակ գեղարուեստական սկզբի սադրող ժամանակակից հայ կինեմատոգրաֆում» (Էջ 74): Կարեւորութեան առումով Յասմիկեանն առանձնացնում է ժամանակաշրջանի մէկ այլ շարժապատկեր՝ Հենրիկ Մալեանի «Եռանկինի»ն, քանի որ այս գործը յստակօրէն բանաձեւել է այն գաղափարը, որ առկայ էր 60ականների մթնոլորտում եւ որը նա անուանում է «հայ կինոյի ամէնից ներդաշնակ սղեղծագործութիւնը... ժամանակակից ազգային ինքնագիտակցութեան ամենաբարձր արդայայրութիւնը հայ կինոյում» (Էջ 145): 1960ականների մասին խօսելիս Յասմիկեանը շատ քիչ է խօսում հայ կինոյի երկու մեծութիւնների՝ Փարաջանովի եւ Փելչենանի մասին, ոչ թէ որ ըստ արժանուոյն չի գնահատում երկուսի ստեղծագործութիւնը, այլ թերեւս այն պատճառով, որ «գարրեր ասրուածների երկրպագող» այս երկու կինոհանճարներն իրենց յայտնագործած կինոլեզուով ասես դուրս են հեղինակի գծած «սեղմ դրուագի» սահմաններից:

Յասմիկեանը հեղինակել է նաև *Остров спасения: Эстетические параметры киноискусства* (Փրկութեան կղզի. շարժանկարի գեղագիտական յարաչափերը, 2003) *Книга (без) конца: Опыт расследования* (Գիրք (ան)վերջի. Երեւան. հետաքրթական փորձ, 2014) ուսւելէն եւ համահեղինակել՝ *Люризм в архитектуре XX века* (Հայամարդարան կողմէ կազմութեան գեղագիտութիւնը XX դարի դրամագործակայում: (Էսսէ-ուսումնասիրութիւն), (2013) հայերէն աշխատութիւնները:

Սուրեն Յասմիկեանը մշահացաւ է 2022ի Հոկտեմբերի 13ին, Երեւանում:

ԱՐԾՈՒԻՒ ԲԱԽԶԻՆԵԱՆ

artsvi@yahoo.com

ՌԻՉԼՐԸ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

(1932-2023)

Ամերիկահայ վաստակաւոր պատմաբան Ռիչլրտ Յովհաննէսեանի մահով, արդի հայոց պատմութեան ուսումնասիրութիւնը ծանր հարուած կրեց:

Ռիչլրտ Յովհաննէսեան ծնած է 9 Նոյեմբեր 1932ին, Թովարէ (Քայլի-ֆորնիա): Ցեղասպանութեան վերապրողներու զաւակ ըլլալը կարեւոր դեր խաղացած է իր ուսումնական կեանքին մէջ: 1954ին շրջանաւարտ եղած է Քայլիֆորնիոյ համալսարանէն (Պըռըլի), իսկ 1958ին ու 1966ին ստացած է